

ԺԹ. ԳԱՐՈՒ ԿԷՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԹԻՒՐ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Փոքր Ասիա՝ Արեւելք—Արեւմուտք առեւտրական ուղիին վրայ, շատ հին ժամանակներէ իվեր ճամբորդներու, միսիոնարներու եւ դիւանագէտներու ուշադրութեան առարկայ եղած է: Նախքան Կեղրոնական Ասիայէն վաչկատուն ցեղերու ներխուժումը, Փոքր Ասիոյ բնիկ ժողովուրդներն էին արեւմտեան նահանգներու եւ Սեւ ծովու ծովեզերեայ քաղաքներու մէջ՝ յոյները, իսկ արեւելեան շրջանի հիւսիսը՝ հայերը, եւ հարաւը՝ քիւրտերն ու ասորիները:

ԺԱ. դարուն, երբ Կեղրոնական Ասիայէն թուրք վաչկատուն ցեղերու դէպի Փոքր Ասիա արշաւանքը սկսաւ, եւ եկուորները հետզհետէ սկսան տեղաւորւիլ ու տիրապետել, բնիկ քրիստոնեայ ժողովուրդներու ընկերային եւ մշակութային զարգացումի թափը նախ կասեցաւ, ապա երբ նորեկները սկսան մահմետական կրօնքին թելադրած բոլոր խստութիւններով ճնշել, ան բոլորովին դադրեցաւ: ԺԶ. դարու սկիզբին, բովանդակ Փոքր Ասիան արդէն Օսմանեան տէրութեան տիրապետութեան ենթարկուած էր: ԺԷ. դարէն մինչեւ ԺԸ. դարու վերջերը, զորս «խաւար» դարեր կը կոչենք, անհրաժեշտ չափով դեռ չեն ուսումնասիրուած: Միսիոնարներու եւ ճամբորդներու հրատարակած վկայութիւններու կողքին, (որոնց պատմական արժէքը կարելի չէ նսեմացնել), կան տակաւին պետութիւններու եւ միսիոնարական կազմակերպութիւններու դիւաններու մէջ պահուած անհամար վկայութիւններ, որոնք լոյս կը սփռեն Հայկական բարձրաւանդակի երբեմնի շէն ու բարգաւաճ դաւաններու ոչ նախանձելի վիճակին վրայ: Հոն, ԺԹ. դարու սկիզբին, անցեալի փառքէն նշոյլ մը անգամ չէր մնացած:

Արեւմուտքի անդրծովեան գաղթավայրեր ունեցող երեք մեծ տէրութիւնները՝ Բրիտանիան, Ֆրանսան եւ Հոլանտան, Ծայրագոյն Արեւելքի հետ իրենց ունեցած առեւտրական շահարեւոյտ յարաբերութիւններուն պատճառով, ԺԶ. դարու կէսէն սկսեալ արդէն Փոքր Ասիոյ քանի մը գլխաւոր քաղաքներուն կամ նաւահանգիստներուն մէջ հիւպատոսարաններ բացած էին, ինչպէս՝ Չմիւռնիոյ, Հայէպի եւ Ալեքսանտրէթի մէջ: ԺԶ. դարուն դեռ գոյութիւն չունէր Սուէզի ջրանցքը եւ Եւրոպայէն Հարաւային Ափրիկէի Բարեյուսոյ հրուանդանի ճամբով դէպի Հնդկաստան նաւարկումն ալ թէ՛ երկար կը տեւէր եւ թէ՛ օդերեւութարանական պատճառներով վտանգաւոր էր: Հետեւաբար, արեւելք—արեւմուտք առեւտրական ուղին՝ կա՛մ Պոլիս—Էրզրում—Պարսկաստան եւ կա՛մ Պո-

լիս—Հայկ պ—Պաղտատ—Պարա ճամբէն, կարաւաններով կ'անցնէր: Արեւմտեան տէրութիւններու համար Արեւմտահայաստանի գաւառները մինչեւ ԺԸ դարու վերջերը լոկաւետական հաղորդակցութեան կայաններու հանգամանքը կը ներկայացնէին: Ֆրանսայի կայսր Նափոլէոն Ա. Պոնափարթը (1769—1821) առաջինը եղաւ, որ Բրիտանիոյ եւ Ռուսաստանի դէմ տարած իր պայքարի յաջողութեան համար Արեւմտահայաստանի գաւառներու ռազմագիտական դրութենէն օգտուելու ծրագրեց: Իրեն պիտի օժանդակէին նաեւ հայերը:

1828—1829ի ռուս—թրքական պատերազմէն ետք, երբ Ռուսաստանի դէպի Պարսից ծոց եւ Միջերկրական ծով թափանցումի ծրագիրը տեսութենէն գործնական փուլի մէջ մտաւ, Արեւմտահայաստանի գաւառներու դիրքին սրաքիլքօր հարցը արեւմտեան մեծ պետութիւններու՝ Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Աւստրիոյ միջաւանը եղաւ: Այս իրողութիւնը մինչեւ մեր օրերը իր անփոփոխ հանգամանքը կը պահէ: Այնուհետեւ արեւմտեան մեծ տէրութիւնները Փոքր Ասիոյ նահանգներու սահմաններուն պաշտպանութեան դերը ստանձնեցին՝ երբեմն նոյնիսկ զէնքի ուժով: Եւրոպական մեծ տէրութիւններու այս հակամարտութենէն օգտուողը միշտ Օսմանեան կայսրութիւնը եղաւ, որ հակառակ իր յետադիմական վարչական կառուցուածքին եւ ոճրապարտ քաղաքականութեան, իր կողքին ունեցաւ արեւմտեան տէրութիւններու աջակցութիւնը՝ ի վնաս իր տիրապետութեան տակ գտնուող քրիստոնեայ ազգերուն: Աղբիւնուպոլսոյ դաշնագրէն (1829) յետոյ, Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան զարգացումներուն մօտէն հսկելու համար, արեւմտեան մեծ տէրութիւնները՝ նախ Բրիտանիա եւ յետոյ Ֆրանսա, ապա եւ՝ Աւստրիա, Իտալիա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ Գերմանիա, էրզրումի մէջ Հիւպատոսարաններ բացին: Անշուշտ Ռուսաստան առաջիններէն էր որ դիւանագիտական իր ներկայութիւնը էրզրումի մէջ հաստատած էր: Դիւանագիտական գործակալներու տեղեկագիրերը այսօր արտակարգ կարեւորութիւն ունին հայ ժողովուրդի՝ իր բնօրրանին մէջ ապրելակերպի պայմաններուն լուսարանման համար²:

էրզրումի Ֆրանսական Հիւպատոսարանը հիմնուեցաւ 1843ի գարնան: Առաջին Հիւպատոսը որ նշանակուեցաւ, Թէոտոր Կէօփ, տարիէն քիչ մը աւելի մնաց: Անոր յաջորդեց Հանրի Սուլանժ—Պոտէն (Henri Soulange-Bodin), որ 15 ամիս էրզրումի մէջ պաշտօնավարեց եւ առողջական պատճառներով հրաժարեցաւ: Քիչ ժամանակ ետք ան Մարոք նշանակուեցաւ: Ստորեւ տրուած տեղեկագիրը, զոր լրիւ կը ներկայացնենք, կը պատկանի Սուլանժ—Պոտէնի եւ յղուած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Կիզոյի³: Վաւերագրի թուականն է 1844, այսինքն՝ հազիւ տասնհինգ տարիներ յետոյ այն պատմական օրերէն երբ առաջին անգամ ռուսական յաղթական բանակը Հայկական բարձրաւանդակի գլխաւոր քաղաքը մուտք կը գործէր: Այս տեսակէտով, Սուլանժ—Պոտէնի վկայութիւնը յուժ կարեւոր է: Ան անգամ մը եւս կը հաստատէ թէ շուրջ 70,000 հայեր ռուսական բանակին հետեւելով նախընտրեցին Կովկաս ապաստանիլ: Յստակ է թէ եթէ Օսմանեան իշխանութիւնները արդարասէր վարչութիւն մը հաստատած ըլլային, ոչ ոք իր դարաւոր հայրենիքը, տունը, տեղը ձգելով ցարական կառավարութեան պաշտպանութիւնը վախելու համար Կովկաս կը գաղթէր:

Վաւերագիրը հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ նաեւ հայ կաթողիկէ համայնքին մասին: Ըստ Սուլանթ-Պոտէնի հաւաքած տեղեկութիւններուն, 1828—29ի ուսուցիչական պատերազմէն առաջ անոնց թիւը էր գրուածի մէջ 1600 պէտք է ըլլայ: ասոնց 1300ը գորավար Փասքելիչի հետեւեցաւ, երբ անոր բանակը Ազրիանուպոլսոյ դաշնագրէն յետոյ էր գրուածէն հեռացաւ դէպի Կովկաս: Սուլանթ-Պոտէն կը հաստատէ թէ այդ թուականներուն Վանի մէջ բնաւ հայ կաթողիկէ չկար, իսկ Պիթլիսի (Բաղէշ) մէջ՝ մէկ ընտանիք: Ըստ նոյն տեղեկագրին, Կարսի եւ Չրլտըրի շրջաններուն մէջ հայ կաթողիկէներուն թիւը աւելի էր քան էր գրուածի մէջ:

Ֆրանսայի էրզրուծի հիւպատոս Սուլանթ-Պոտէն իր տեղեկագրի առաջին մասը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անդամներուն կը յատկացնէ, որոնց schismatique «հերձուած» կ'որակէ: Այս յորջորջումին արմատը անշուշտ Բաղկերձի ժողովին (Հոկտեմբեր 451) որոշումներուն մէջ պէտք է փնտուել, երբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պարսկական հարածանքի պատճառաւ չէր կրցած մասնակցիլ եւ Բիւզանդիոնի ու Հռոմի եկեղեցիներուն յանգած եզրակացութիւններուն խստիւ հակառակած էր¹: Այդ թուականէն յետոյ, Հռոմ եւ Բիւզանդիոն քանիցս փորձեցին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իրենց ծիրին մէջ առնել, բայց իւրաքանչիւր անգամուն աւելի վճռական կերպով անոնց նախաձեռնութիւնը մերժուեցաւ²: Էջմիածնի Ս. Աթոռը իր սկզբունքին մէջ անդրդուելի մնաց եւ այս պատճառաւ ալ իր հետեւորդները Հռոմի դաւանանքը բաժնող կաթողիկէ հասարակութենէն զանազանուելու համար սովորաբար կաթողիկէ եկեղեցականներու եւ կաթողիկէ դիւանագիտական գործակալներու կողմէ «հերձուած» կոչուեցան: Այս բառին գործածութիւնը շատ աւելի յաճախ դէպ կը տեսնուի մանաւանդ երբ Բարձրագոյն Դուռը, Ֆրանսական կառավարութեան ճնշման տեղի տալով, 1831ին կաթողիկէ դաւանանքին պատկանող քրիստոնեայ օսմանահպատակներուն իրրեւ «անջատ» ազգ կամ «համայնք» ըլլալով գոյութեան իրաւունքը ճանչցաւ: Արդարեւ, այդ թուականէն յետոյ, կաթողիկէ միսիոնարներու Փոքր Ասիոյ գաւառներուն եւ Միջին Արեւելքի այլ երկիրներու մէջ գործունէութիւնը նոր թափ մը ստացաւ տեղացի ոչ-խլամ ժողովուրդներու մօտ: Օսմանահպատակ ոչ-խլամ ժողովուրդները մահմետական իշխանութիւններու հարստահարութիւններուն, կեղեքումներուն եւ հալածանքին դէմ Ֆրանսական կառավարութեան պաշտպանութիւնը վաշիշելու յոյսով յաճախ դաւանափոխութեան կը դիմէին: Ասոր անհերքելի ապացոյցներէն մին է նաեւ 1862ին Չէլթունի դէմ Ազիզ փաշայի կողմէ կատարուած արշաւանքի ընթացքին Չէլթունի բնակչութեան հայ կաթողիկէ պատրիարք Հասունի մօտ կատարած ձեռնարկը: Անոնք կաթողիկէ կրօնքին յարելու պատրաստակամութիւն կը յայտնեն եթէ Ֆրանսա իրենց պաշտպանութեան համար Օսմանեան կառավարութեան մօտ միջամտէ եւ յաջողի Չէլթունի ինքնավար վարչաձեւ մը ապահովել³: Դիւանագիտական թղթակցութիւններու ընթացքին յաճախ կարելի է հանդիպիլ նաեւ uni (միացած) կամ non-uni (ոչ-միացած) բառերուն: Մոյ բառը կը տրուէր ժողովուրդին այն հատուածին որ դաւանափոխ եղած եւ Հռոմի եկեղեցիին յարած էր: Իսկ non-uni կը կոչուէին նոյն ժողովուրդին այն անդամները որոնք իրենց ազգային եկեղեցիի աւանդու-

թեանց հաւատարիմ մնացած էին:

Քրիստոնէութեան տարածումի միսիոնարական գործունէութեան կ'ընկերանար անշուշտ արեւմտեան քրիստոնեայ տէրութիւններու մշակոյթի եւ քաղաքական ազդեցութեան ընդարձակումի ծրագիրը: Այս պատճառաւ է որ, նախորդ դարու 30ական թուականներէն յետոյ, երբ Արեւմտահայաստանի գաւառները աւետարանական միսիոնարներու մեղուաջան գործունէութեան դաշտ եղան, ամերիկեան եւ անգլիական կառավարութիւնները մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին:

Ինչպէս ծանօթ է, ժ.Ք. դարու վերջին տասնամեակին այ Արեւմտահայաստանը զերմանացի միսիոնարներու ուշադրութեան առարկայ պիտի ըլլար: Իսկ Օսմանեան պետութիւնը զիրար խաչաձեւող եւ իրարու հետ քաղաքական թէ տնտեսական մարզերու մէջ մրցակից տէրութիւններու հովանաւորած միսիոնարական գործունէութիւնը քաջայերեց նախատեսելով որ անոնց ինքնուորոյն մշակոյթին ենթակայ ոչ—խսլամ ժողովուրդներու ազգային միասնականութիւնը կ'ընայ այս կերպով տկարանալ:

Թէեւ աւետարանական միսիոնարներու կողմէ գործունէութեան մասին բաւական լաւ ուսումնասիրութիւններ լոյս տեսած են⁷, բայց որքան որ տեղեակ ենք կաթողիկէ միսիոնարներու ժ.Ք. դարու Փոքր Ասիոյ մէջ ունեցած գործունէութիւնը դեռ պատշաճ ուսումնասիրութեան առարկայ չէ եղած նկատի առնելով այն այլազան դիւանները որոնք վստահաբար խիստ հետաքրքրական տեղեկութիւններ կը պարունակեն:

Տեղեկագրին մէջ երբ կը տեսնենք թէ հիւպատոսը կը գրէ որ «Քիւրտիստանի եւ նամանաւանդ Մուշի, Վանի, Պիթիւսի եւ Տիգրանակերտի մէջ հայեր կան», ուրեմն կը թուի, թէ իրեն անծանօթ է որ «Հայաստանի նահանգ» կամ Էրմենիսքան Էյալէթին՝ իրրեւ հայ ժողովուրդի բնօրրան իր անունը մինչեւ Սուլթան Մահմուտ Բ-ի գահակալութեան սկիզբը (1809) պաշտօնապէս պահած էր: Օսմանեան տէրութիւնը ոչ մէկ անպատեհութիւն տեսած էր զայն փոխելու, ինչպէս Պուլկարիա՝ պուլկարներու երկիր, Ռումելի՝ յոյներու, Կիւրճիստան՝ վրացիներու կամ Քիւրտիստան՝ քիւրտերու երկիր եւլն⁸: Բայց ժ.Ք. դարու սկիզբին երբ ազատագրական շարժումները նոր թափ ստացան, Օսմանեան կայսրութիւնը վերջ տուաւ այդ անուններուն գործածութեան, քանի անոնք շատ կը յիշեցնէին Օսմանեան հպատակ ժողովուրդներուն անցեալը: Օսմանեան տէրութիւնը նախապէս իւրաքանչիւր երկրի մէկ ընդհանուր կառավարիչ կարգած էր: Իսկ երբ իւրաքանչիւր երկիր քանի մը նահանգի բաժնուեցաւ, ապա իւրաքանչիւր նահանգի կառավարիչ նշանակեց: Այսպէս, Էրմենիսքան Էյալէթին չորս նահանգի կամ վիլայէթի բաժնուեցաւ: Ասոնք էին Էրզրում, Սարբերդ, Վան եւ Տիգրանակերտ:

Եթէ նախորդ դարու 40ական թուականներուն, Սուլթան—Պատէն Հայկական նահանգները Քիւրտիստան կը կոչէ, պատճառը այն է որ ժ.Ձ. դարէն յետոյ երբ քիւրտերը սկսան դէպի հիւսիս՝ Էրզրումի շրջանը տեղաւորուիլ, ատով՝ արդէն տեղական իշխանութիւններու հարստահարութեան ենթակայ եղած խաղաղ բնակչութիւնը նոր պատուհաս մը կ'ունենար: Այս պատճառաւ է որ Արեւմտահայաստանի գաւառներէն դէպի արեւմտեան Փոքր Ասիա դանդաղ արտա-

գաղթ մը սկսաւ: Միւս կողմէ, 1828–29-ի ուռւս–թրքական պատերազմին, ծանօթ է թէ շուրջ 70,000 հայ բնակիչներ Կովկաս ապաստանած էին: Հետեւաբար, հայ ժողովուրդը ի՛ր իսկ հայրենիքին մէջ իր թուական դերակշռութիւնը կորսնցնել սկսաւ: 1873-ին յոյս տեսած Օսմանեան սալնամէ մը մեզի հետեւեալ վիճակագրական տուեալները կու տայ էրզրումի նահանգի բնակչութեան մասին⁹. Հոս նկատի առնուած են միայն արու բնակիչները:

	մահմետական	քրիստոնեայ	ընդհ. գումար
էրզրումի սանճաք	86.901	29.687	116.588
Վանի սանճաք	41.722	39.896	81.618
Կարսի սանճաք	19.580	2.484	22.064
Պայագիտի սանճաք	23.225	5.505	28.730
Զըլաբրի սանճաք	43.189	1.875	45.064
Մուշի սանճաք	47.765	40.104	87.869
էրզինճանի սանճաք	52.251	11.866	64.117
ընդհ. գումար	314.633	131.417	446.050

Վանի նահանգը 1876 Դեկտեմբերին է որ առանձին նահանգի պիտի վերածուէր: Բ. Դուռը քրիստոնեայ բնակչութեան թիւը նահանգին մէջ համեմատաբար նուազ ցոյց տալու համար քրտարնակ Հեքքիարին Վանին պիտի միացնէր:

Տեղեկագիրը էրզրումի նահանգին եւ առհասարակ հայկական գաւառներու մէջ տիրող մտայնութեան, կղերին տիտւր երեւոյթին եւս կ'անդրադառնայ: «Կրօնականը որ ժողովուրդի ծոցէն ելած է, — կը կարդանք, — առհասարակ իրեն տրուած իշխանութիւնը չարաչար կը գործածէ: Իր համայնքին հանդէպ, — ու ապա՝ — այնքան կամայական է՝ որքան՝ հլու հնազանդ թուրք իշխանութիւններու հետ իր յարաբերութիւններուն մէջ»:

Սուլանտ—Պոտէնի այս եզրակացութիւնը կարգ մը լուսաբանութիւններու կը կարօտի: Պիտի ջանանք հակիրճ տողերու մէջ ամփոփել թէ ի՛նչ էր Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ եկեղեցականի մը դերը, դարերու ընթացքին ինչպէս զարգացաւ եւ ժթ- դարու կէսէն յետոյ ինչպիսի փոփոխութիւններու ենթարկուեցաւ: Մանօթ է թէ Օսմանեան տէրութեան օրինագիրքը (մեճէլլէ) ներշնչուած էր Մարգարէին թելադրած կրօնական սկզբունքներուն համաձայն եւ Սուլթանը, իբր խալիֆա, Մարգարէին յաջորդն էր: Մահմետական տէրութեան տիրապետութեան ենթակայ ոչ—խսլամ ժողովուրդները կամ համայնքները նոյնպէս՝ իրենց եկեղեցիով եւ եկեղեցականներով, անջատուած, իւրաքանչիւրը իր պատրիարքին կամ ազգապետին (միլլէթպայաշը) շուրջ հաւաքուած էր: Ոչ—խսլամը, որ մահմետականին բաղդատմամբ երկրորդ կարգի ժողովուրդ կը նկատուէր, հաւասար իրաւունքներ չէր վայելեր: Ան իրաւունք չունէր զէնք կրելու նոյնիսկ եթէ իր կեանքը, պատիւը, կամ ստացուածքը խնդրոյ առարկայ ըլլար: Ոչ—խսլամին վկայութիւնը անընդունելի էր երբ իր հակառակորդը Մարգարէին հաւատացող մըն էր: Նոյնիսկ հարիւր քրիստոնեայի վկայութիւն անբաւարար էր դատարանին առաջ մէկ չարագործ մահմետական մը պատժելու համար: Ոչ—խսլամ մը չէր արտօնուած ձի հեծնելու: Ան պարտաւոր էր ճամբայ

տալու երբ իսլամ մը պիտի անցնէր: Մահմետականն էր որ հայրենիքին պաշտպանութիւնը գէնքի ուժով կատարելու պարտականութիւնը ստանձնած էր յանուն կրօնքի պաշտպանութեան, իսկ ոչ—իսլամը 15 տարեկանէն սկսեալ պարտաւոր էր գլխահարկ (impôt de capitation) վճարելու: Իւրաքանչիւր ոչ—իսլամ հասարակութիւն իր եկեղեցիին եւ պատրիարքին հովանիին տակ առանձին ազգութիւն մը կը ներկայացնէր: Պատրիարքը կամ միլլէթպաշըն ազգապետի հանգամանքով կառավարութեան առջեւ իր ժողովուրդին պատասխանատուն էր: Գաւառներու մէջ, պատրիարքներու կողմէ իրրեւ ներկայացուցիչ նշանակուած առաջնորդներն էին որ այս դերը ստանձնած էին: Պատրիարք մը լիազօրուած էր նոյնիսկ իր համայնքէն մէկը աքսորելու: Այս կամայական վարչութիւնը մինչեւ Խրիմի պատերազմը (1854—56) շարունակուեցաւ եւ ի վերջոյ Փարիզի դաշնագրին (30 Մարտ 1856) Գ. յողուածին տրամադրութիւններուն համաձայն Պոլսոյ հայ համայնքի երեւելի անձնաւորութիւններու պատրաստած Ազգային Մահմանդրութեան Բարձրագոյն Դրան կողմէ վաւերացումով վերջ գտաւ (29 Մարտ 1863 Ն. Տ.): Մինչ այդ, դարերու ընթացքին Փոքր Ասիոյ գաւառներուն մէջ ճնշուած քրիստոնեայ ժողովուրդները, ընդ որս հայերը, իրրեւ նեցուկ միայն իրենց հոգեւոր առաջնորդը ունէին որ տեղւոյն իշխանութիւններու ճնշումներուն, հարստահարութիւններուն եւ մահմետական հասարակութեան թշնամանքին դէմ բողոքելու եւ արդարութիւն պահանջելու իրաւունք իսկ չուէր: Բարձրագոյն Դրան միակ մտահոգութիւնն էր ոչ—իսլամներու համար սահմանուած տարեկան գլխահարկը դանձել. դանձումը առաջնորդարանի ծննդեան արձանագրութիւններուն շնորհիւ կը կատարուէր: Եկեղեցականը սեւէ գործադիր ուժ չունենալով, սեւէ ապօրինի խնդրի առթիւ չհամարձակելով տեղական իշխանութիւններու մօտ բողոքել, յաճախ ակամայ իր պաշտպանեալ ազգակիցին դէմ շարժած կ'ըլլար: Եղան ալ նաեւ, ոչ միայն աշխարհականներ, այլ նոյնիսկ եկեղեցականներ որոնք իրենց անտարբերութեամբ եւ մերթ ալ շահախնդրութեամբ անօգնական ժողովուրդին վիճակը ա'լ աւելի վատթարացուցին: Պերլինի Վեհաժողովի օրերուն, Մայիս 1878ին, Ներսէս Պատրիարքի հարահանգով գաւառները այցելող Պօղոս վրդ. Նաթանեան իր տպաւորութիւնները սապէս կը պատմէ. «... տեսայ Առաջնորդներ, որք իրենց տաղանդը անձնական փառաց՝ շահուն եւ գուարճութեանց կը գործածէին, եւ ոմանք՝ այ ժողովուրդը տգիտութեան մէջ մնալ կը փափաքէին, անփոյթ եւ անհոգ գտնուելով իրենց նուիրական կոչման, երբ վիճակի Առաջնորդ մը այս ընթացքի մէջ գտնուի, ժողովուրդը հարստահարութիւնէ կ'ազատի՝ թէ կ'աւելնայ: Ուրեմն այսպիսի Առաջնորդք պատճառ են հարստահարութեանց»¹⁰: Պոլսոյ Մասիս թերթին մէջ գաւառներէ ուղարկուած այսօրինակ թղթակցութիւններու յաճախակի կարելի է հանդիպիլ: Այսուհանդերձ, տարակոյս չկայ թէ Արեւմտահայաստանի գաւառներու հարստահարուած եւ քիւրտ պէկերու քմահաճոյքին ենթակայ անպաշտպան հայ ժողովուրդին համար իր կրօնքը եղաւ իր իրրեւ ազգ գոյութեան խարխիւր:

Սուլթան—Պոտէն իր տեղեկագրին մէջ կը գրէ նաեւ թէ էրզրումի, Մուշի, Պրիթլիսի եւ Վանի հայերը Ռուբէնեան շառաւիղին կը պատկանին եւ հրեաներէ սերած են: Այս վարկածը շատ հին, նախնադարեան առասպելներէ ծնունդ

կ'առնէ: «ժողովուրդներու ծագումը,— կը գրէ Երեւելի պատմարան Ադոնց,— դարերու խաւարին մէջ կը կորսուի»¹¹: Հայ ժողովուրդի ծագումն ալ անշուշտ բացատրութիւն մը պիտի չկազմէր: Ըստ հայ պատմագիրներու նահապետ Մովսէս Խորենացիի, հայ ժողովուրդի ծագումը Քրիստոսէ 22 դարեր առաջ Ջրհեղեղէն յետոյ կը սկսի, երբ Թորգոմի որդի Հայկ իր բազմաթիւ հետեւորդներով Միջագետքէն Արարատ լեռան ստորոտի դաշտերը կու գայ հաստատուելու¹²: Մինչ այդ, ըստ Աստուածաշունչի, «Հրեաներու Աքքանագ կոչուած թեւին բնօրրանը Հայաստանի Արարատ լեռան մօտ կը գտնուի»¹³: Ժաք Տը Մորկան կը գրէ թէ Մովսէս Խորենացի որ հայ ժողովուրդի ծագումը կ'ուզէ Աստուածաշունչի աւանդութիւններուն հետ հաշտեցնել, առասպելները իրրել իրականութիւն կը մեկնարանէ, կ'ուզէ սոյն վարկածները ընդունել, մինչդեռ հայերը Պաշտօններու շրջանէն Փոքր Ասիա եկած եւ Ուրարտուի թագաւորութեան անկումէն յետոյ Վասպուրականի շրջանը հաստատուած են:

Հայ ժողովուրդի հրեաներու հետ շփումը անշուշտ շատ հին է: Ըստ Փաւստոս Բուզանդի եւ Մովսէս Խորենացիի, Ասորեստանի թագաւոր Նարուզոդոնոսոր երբ 586ին (Ք.ա.) Երուսաղէմը գրաւեց, բազմահազար հրեաներ Միջագետք գերեզմարեց. ասոնք յետոյ Հայաստան հաստատուելով իրր թէ Բագրատունեաց տոհմին հիմնադիրները եղան¹⁴: Ծանօթ է նաեւ թէ Տիգրան Բ-ի եւ Արշակ Բ-ի օրով ալ բազմահազար գերիներ Տիգրանակերտի շրջանը փոխադրուեցան. ասոնց մէջ կային մեծ թիւով հրեայ ընտանիքներ: Հայաստան հաստատուած հրեայ ընտանիքներուն թիւը մեզի կու գայ Խորենացիի եւ Բուզանդի տուեալներէն, որոնք խիստ չափազանցուած են: Հրէական համայնագիտարանը եւս գերեզմարուած հրեայ ընտանիքներուն թիւի Խորենացիի եւ Բուզանդի տուեալները խիստ չափազանցուած կը գտնէ¹⁵:

Ժաք Տը Մորկան Բագրատունի տոհմը իրրել զուտ հին հայկական տոհմ մը ըլլալը կ'ընդունի, «այլապէս,— կ'ըսէ ան,— հայ թագաւոր մը հինգ դարեր յետոյ չէ որ անոր ազնուականի տիտղոս պիտի շնորհէր Հայաստանի թագաւոր հռչակուելու համար»¹⁶:

Բագրատունիներու անկումով, ԺԱ. դարու կէսին Հայաստան իր անկախութիւնը կը կորսնցնէ, եւ քանի մը տասնեակ տարիներ յետոյ Բուբէն իշխան իր հետեւորդներով Կիլիկիոյ մէջ կը հաստատէ Կիլիկիոյ Հայկական պետութիւնը:

Սուլայմ-Պոտէն կարգ մը տեղեկութիւններ ալ կը հաղորդէ ասորիներու, նեստորականներու եւ քաղղէացիներու մասին, որոնք մինչեւ Ա. Համաշխարհային պատերազմը Փոքր Ասիոյ հարաւ-արեւելեան նահանգներուն մէջ զգալի թիւ մը ունէին եւ 1915—1916 տարիներուն Հայկական Յեղասպանութեան ժամանակ անլուր հալածանքներու եւ կոտորածներու ենթակայ ըլլալով գրեթէ իրենց գոյութեան վերջ տրուեցաւ Փոքր Ասիոյ մէջ:

Տեղեկադրի հեղինակային կամ նախարարութեան ծանօթագրութիւնները կու տանք շեղագիր, բնագրային հարազատութեամբ, Փրանսերէն:

Consulat de France
à Erzeroum

Erzeroum, le 12 Novembre 1844

Henry Soulange-Bodin
à (Monsieur Guizot)

Renseignements sur les populations chrétiennes de l'Arménie, du Kurdistan et de la Perse

Les populations chrétiennes de l'Arménie, du Kurdistan et de la Perse sont:

Les Arméniens schismatiques, les Arméniens catholiques, les Nestoriens, les Chaldéens, les Jacobites, les Syriens.

Arméniens schismatiques: Les Arméniens schismatiques sont très nombreux dans le Pachalik d'Erzeroum;¹⁷ on en trouve dans toutes les villes et dans la plupart du village. A Erzeroum on compte 950 familles. Un document officiel publié par la Russie en 1841 donne les chiffres suivants pour les provinces transcaucasiennes:

Géorgie.....	105.567 âmes,
Province d'Erivan	113.227 âmes,
Karabagh.....	62.287 âmes,
Chyrgan.....	12.847 âmes,

En Perse, Ispahan renferme 700 familles dont l'établissement date de Schah Abbas le Grand,¹⁸ à Tauris 350. A Téhéran et dans les autres parties de la Perse on n'en compte qu'un nombre peu important.

Dans le Kurdistan on en rencontre surtout à Mouch, Van, Bitlis, et Diarbékir.

Ils sont divisés en deux sectes ayant chacune un Catholicos distinct, celui d'Etchmiadzin, celui d'Ak[h]tamar. Etchmiadzin est un vaste couvent situé près d'Erivan; le catholicos qui en porte le nom est élu par un synode assemblé par ordre de l'Empereur de Russie; son pouvoir spirituel s'étend sur les Arméniens de la Russie, sur ceux de la majeure partie de l'Empire Ottoman, de la Perse, de l'Afghanistan et des Indes.

Le titre de catholicos était dans l'origine une simple épithète ajoutée au titre d'Episcopus. Lorsque Constantin eut divisé l'Empire d'Orient en diocèses, les Patriarches d'Alexandrie et d'Antioche et les primates d'Ephèse, Héraclée et Césarée déléguèrent des catholicos à la tête des diverses branches de l'Eglise qui se trouvaient en dehors des limites de l'Empire. Ainsi le métropolitain de Perse et l'archevêque de Seleucie sont les premiers à porter ce titre en se reconnaissant dépendant du siège d'Antioche; c'est à leur exemple que plus tard les chefs de l'Eglise arménienne l'adoptèrent également.

Pendant longtemps la dignité de catholicos ne fut soumise à aucune règle fixe d'élection; pour être valable, le choix du clergé ou des principaux de la nation devait simplement être approuvé par le souverain étranger auquel les Arméniens se trouvaient soumis et en retour de cette approbation celui-ci recevait un tribut annuel. L'historien Arménien Chamchian rapporte qu'en 1058 notamment ce tribut était exactement payé à l'Empereur Isaac Comnène.¹⁹ Depuis les Sofis, jusqu'au commencement du siècle actuel ce furent les Rois de Perse qui prélevèrent ce droit. En 1810 le catholicos Ephraïm²⁰, lorsqu'il fut élevé au siège d'Etchmiadzin alla trouver l'Empereur de Russie²¹ et lui demanda sa protection afin de s'exempter de répondre aux réclamations du Schah. Il fut reçu avec bienveillance et revint entrer en fonction revêtu de la grande croix de l'Ordre de Sainte-Anne et d'ornements pontificaux qu'il devait à la munificence impériale. En 1822, pendant la guerre entre la Turquie et la Perse il trouvait un refuge sur le territoire russe jusqu'à ce que Etchmiadzin fut devenu définitivement une possession de la Russie.

L'incorporation d'Etchmiadzin à la Russie a servi les vues de l'Empereur qui voulait attirer dans la province du Caucase la population arménienne des provinces turques et persanes limitrophes. Outre les concessions de terre et les promesses de privilèges et de droits politiques, on leur fit valoir l'avantage d'une réunion plus étroite à leur chef spirituel. En 1838 on évaluait à 40.000 les Arméniens émigrés de la Perse²² et à 70.000 ceux de la Turquie.²³ La Russie a remplacé par un système régulier d'appointement les revenus de toute nature que recueillaient jadis le couvent et le catholicos d'Etchmiadzin. Les autres couvents de la province d'Erivan ont également été réorganisés et les enfants qui suivent les écoles sont tenus d'y apprendre le russe. En dédommagement un Ukase de l'Empereur a autorisé le catholicos à faire, comme par le passé, le miracle de Meïron, huile sacrée, qui attirait autre fois de nombreux pèlerins de la Perse et de la Turquie et qui était la principale source de richesse d'Etchmiadzin.

Le catholicos d'Ak[h]tamar n'est reconnu que dans le Kurdistan central et par une population peu nombreuse.²⁴ Il est électif. Ak[h]tamar est un îlot dans le lac de Van vers le sud-est.

Le siège d'Ak[h]tamar date de 1113. C'était l'époque de la domination des Croisés dans la Syrie et la Palestine et l'autorité du Pape avait repris de l'ascendant sur la communion orientale. Le catholicos d'Etchmiadzin s'étant soumis momentanément à la cour de Rome, un Arménien nommé David rallia autour de lui les compatriotes restés fidèles au schisme et se déclara catholicos d'Ak[h]tamar.²⁵

Il existe enfin un troisième catholicos: celui de Siz (sic),²⁶ près d'Adana; il est héréditaire et descend des rois d'Arménie.

Le patriarche arménien de Constantinople est complètement indépendant de ces catholicos; bien que son pouvoir spirituel relève de celui d'Etchmiadzin, il est à Constantinople comme le patriarche Grec et le Grand Rabbín des Juifs, le chef politique de sa nation.²⁷ Le gouvernement turc lui interdit de communiquer librement avec le catholicos d'Etchmiadzin.

Le clergé arménien schismatique se compose d'archevêques, d'évêques, de virtabets prêtres célibataires, qui seuls peuvent être promus aux grades supérieurs: de derders ou kéchiches, prêtres mariés ordonnés après leur mariage.

A quelques exceptions fort rares, le clergé est extrêmement ignorant et dissolu. Tiré de la lie du peuple, il abuse généralement du pouvoir qu'il a entre les mains, et se montre aussi arbitraire dans la communauté qu'il est rampant dans les rapports avec les autorités turques. Dans les affaires religieuses, inobservance de carême et autres infractions, le gain de cause ou l'absolution ne sont acquis qu'à prix d'argent. Cette ignorance et cette dépravation des Arméniens de ces contrées date de temps éloignés. Lorsque Sélim II réduisit l'Arménie au pouvoir des Turcs,²⁸ ses armes achevèrent de détruire les bibliothèques et les couvents où s'étaient réfugiés les débris de l'ancienne civilisation arménienne.

Les Arméniens schismatiques ont un grand nombre de couvents avec des dotations. Chaque église a des revenus qui proviennent de certaines taxes imposées sur la tête des chefs de famille. Plusieurs de ces couvents ont une grande réputation de sainteté; ils reçoivent des offrandes et envoient des virtabets quêter dans les pays lointains.

Les évêques perçoivent les revenus des terres dépendantes des couvents et prélèvent des droits plus ou moins considérables sur les ordinations et les divers sacrements de l'Eglise.

Dans le pachalik d'Erzeroum de même que dans le reste de la Turquie la population arménienne nomme les Kodja-bachis.²⁹ C'est au Kodja-bachis que les Pachas et gouverneurs s'adressent pour le paiement des impôts et les affaires de police. Les Kavass³⁰ ne peuvent visiter une maison arménienne pour un motif quelconque de police locale sans être accompagnés de l'un d'eux; ils recueillent les impôts dans les villes et les villages mais de telle manière, assure-t-on, qu'ils trouvent souvent à alimenter leur cupidité avant de verser leur récolte entre les mains des autorités turques.

Ce système de municipalité rend les Rayas³¹ esclaves de leurs Kodja-bachis et les soumet à une double oppression. On lui a attribué (Mr. Urquhart)³² la durée et le maintien de l'Empire Ottoman, ne peut-on pas aussi avec raison, et surtout dans cette partie de l'Asie Mineure, le considérer comme la première cause de l'appauvrissement et de la dégradation des Rayas?

Les Arméniens d'Erzeroum, de Mouch, Bitlis et Van, passent pour descendre des Juifs de la tribu de Ruben qui embrassèrent le christianisme sous l'un des premiers Rois d'Arménie. Le dernier de ces Princes qui se retira en France où il mourut,³³ appartenait à une famille de cette même tribu de Rouben.

Les Arméniens de ce pachalik ont en effet quelque chose de Juif dans la physionomie. Pendant la semaine sainte ils ont à Van un marché dans la cour de leurs églises. A Van également on voit les enfants se masquer à l'époque du carnaval. On suppose que ces coutumes viennent des anciens Israélites.

Arméniens catholiques: Les Arméniens catholiques datent dans ce pays de la fin du XVII^e siècle. Les premières conversions furent l'œuvre de la mission des Jésuites qui étaient venus s'établir à Erzeroum en 1688³⁴ munis de firmans dû à l'entremise de l'ambassade de France. L'évêque arménien de cette ville fut un des premiers qui passèrent au catholicisme.

Les Jésuites ne tardèrent pas à être persécutés, mais ayant de nouveau trouvé appui auprès de l'ambassadeur de France, ils étendirent leur succès à ce point qu'ils durent diviser la mission en deux branches: l'une portait le nom de Saint-Grégoire l'Illuminateur et embrassait les villes de Tortoum, Hassankaleh, Kars, Bayazit et 40 villages; l'autre avait pris le nom de Saint-Ignace et comprenait Ispir, Baïbourt, Ak[h]altisk[h]e, Trébizonde, Gumuchkhanéh et 27 villages. Chacune de ces villes contenait un nombre considérable de catholiques.

Aujourd'hui, les Arméniens catholiques sont très peu nombreux dans le pachalik d'Erzeroum; dans la province de Van il n'en existe pas; à Bitlis, il n'y a qu'une famille catholique; un prêtre de Mouch s'y rend pour elle deux ou trois fois par an; à Mouch on trouve quelques familles et dans les environs, quelques villages d'Arméniens catholiques; à Bayazit également.

Dans le pachalik de Kars et dans la petite province de Tchildir, ils sont plus nombreux que partout ailleurs. A Erzeroum, on en compte 300 seulement; à l'époque de la prise de cette ville par les Russes, ce chiffre s'élevait à 1600.

Aujourd'hui les Arméniens catholiques qui passèrent alors sur le territoire russe comptaient trouver une condition meilleure dans les Etats d'une puissance chrétienne. Ils ont peut-être à regretter aujourd'hui le joug musulman.

